



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

13 հունվարի 2026 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան հետևյալ կազմով՝ նախագահող՝ դատարանի նախագահ Ա.Ա. Դրոնովի, զեկուցող դատավոր՝ Դ.Պ. Ալեքսանդրովի, դատավորներ՝ Է.Վ. Հայրիյանի, Կ.Կ. Ջունուշյանի, Ա.Ա. Ջաբարայի, Ե.Ժ. Իսմայիլովի, Մ.Տ. Կայիպովի, Ա.Բ. Կիշկեմբաևի, Ն.Վ. Պավլովայի, Ա.Գ. Թունյանի,

մասնակցությամբ՝ դատական նիստի քարտուղար Ա.Ն.Ադերեյկոյի,

լսելով զեկուցող դատավորին, ուսումնասիրելով գործի նյութերը, ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 2-րդ, 46-րդ, 47-րդ, 49-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-75-րդ, 96-98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 14-րդ, 18-րդ, 19-րդ, 24-րդ, 72-րդ, 75-րդ, 85-րդ հոդվածներով, Խորհրդատվական եզրակացություն է տրամադրում՝ ըստ Ղազախստանի Հանրապետության «Աթամեկեն» ձեռնարկատերերի ազգային պալատի Եվրասիական տնտեսական միության իրավունքի ակտերի դրույթների համատեքստում մաքսային կարգավորման ոլորտի առանձին հարցերի պարզաբանման վերաբերյալ դիմումի:

I. Դիմողի հարցերը

1. Ղազախստանի Հանրապետության «Աթամեկեն» ձեռնարկատերերի ազգային պալատը (այսուհետ՝ «Աթամեկեն» ՁԱՊ, դիմող) դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ համապատասխանաբար՝ ԵԱՏՄ, Միություն, Դատարան) հետևյալ հարցերի պարզաբանման դիմումով.

1) ի՞նչ է պետք հասկանալ «մաքսային հսկողությունից թաքցնել», «ապրանքների ոչ հավաստի մաքսային հայտարարագրում» եւ «ապրանքների չհայտարարագրում» եզրույթների ներքո՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ ԵԱՏՄ ՄՕ) իմաստով, եւ ո՞րն է այդ իրավախախտումների կազմը,

2) արդյո՞ք այն դեպքը, երբ մաքսային հսկողությունից թաքցնելը տեղի է ունեցել երրորդ անձանց մեղքով, այսինքն՝ առանց ապրանքն ուղարկող-վաճառողի եւ ստացող-գնորդի մասնակցության, կարող է որակվել որպես ապրանքների անօրինական տեղափոխում ԵԱՏՄ մաքսային սահմանով՝ ԵԱՏՄ ՄՕ 2-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի իմաստով,

3) արդյո՞ք ապրանքն ուղարկողը-վաճառողը եւ ստացողը-գնորդը կարող են համարվել ապրանքն անօրինական տեղափոխող անձինք կամ այլ անձ՝ ԵԱՏՄ ՄՕ-ի իմաստով, եթե նրանք չեն իմացել եւ չէին կարող իմանալ ԵԱՏՄ մաքսային սահմանով ապրանքի անօրինական տեղափոխման մասին,

4) որո՞նք են ԵԱՏՄ իրավունքին համապատասխան ապրանքների բռնագրավումը՝ որպես պատասխանատվության միջոց կիրառելու պայմանները՝ ապրանքները մաքսային հսկողությունից թաքցնելու կամ ոչ հավաստի մաքսային հայտարարագրման կամ չհայտարարագրման դեպքում,

5) արդյո՞ք ԵԱՏՄ իրավունքը, մասնավորապես՝ ԵԱՏՄ ՄՕ-ն, պահանջում է ապրանքները մաքսային հսկողությունից թաքցնելու, ոչ հավաստի մաքսային հայտարարագրման կամ չհայտարարագրման դիտավորության առկայություն՝ որպես նշված խախտումների դեպքում ապրանքների բռնագրավման կիրառման պարտադիր պայման,

6) արդյո՞ք ԵԱՏՄ իրավունքի համաձայն՝ երթուղու սխալի դեպքում ապրանքի բռնագրավումը թույլատրելի, համաչափ եւ համամասնական միջոց է, եթե բեռն ուղարկողի՝ թաքցնելու, մաքսանենգության կամ մաքսային օրենսդրության այլ էական խախտումների դիտավորությունը, բացակայում է,

7) արդյո՞ք ԵԱՏՄ իրավունքը թույլատրում է ԵԱՏՄ մաքսային սահմանով անօրինական տեղափոխված, սակայն այդ անձանց սեփականության ներքո գտնվող ապրանքի բռնագրավումը, որոնք ԵԱՏՄ եւ ԵԱՏՄ անդամ պետության մաքսային օրենսդրության խախտողներ չեն եւ (կամ) չեն իմացել ու չէին կարող իմանալ նման տեղափոխման անօրինական լինելու մասին,

8) արդյո՞ք ԵԱՏՄ իրավունքը (ԵԱՏՄ ՄՕ) նախատեսում է նվազագույն երաշխիքներ մաքսային օրենսդրությունը խախտողների համար՝ պատասխանատվության միջոց ընտրելիս հաշվի առնելով հանրային վտանգավորության աստիճանը, դիտավորության առկայությունը եւ իրավախախտման այլ բնութագրիչներ,

9) որո՞նք են ԵԱՏՄ ՄՕ 2-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետով նախատեսված իրավախախտումների սուբյեկտիվ եւ օբյեկտիվ կողմերը, մասնավորապես՝ մաքսային հսկողությունից թաքցնելը, ոչ հավաստի մաքսային հայտարարագրումը եւ ապրանքների չհայտարարագրումը, ո՞րն է մեղքի ձեւը նման իրավախախտումների դեպքում, արդյո՞ք այն ենթակա է ապացուցման, թե՞ վերագրվում է օրենքի ուժով,

10) ո՞րն է ԵԱՏՄ անդամ պետությունների հայեցողության աստիճանը սեփական օրենսդրությամբ «մաքսային հսկողությունից թաքցնել», «ապրանքների ոչ հավաստի մաքսային հայտարարագրում» եւ «ապրանքների չհայտարարագրում» հասկացությունները եւ նման իրավախախտումների կազմը սահմանելիս՝ հաշվի առնելով ԵԱՏՄ ՄՕ 1-ին հոդվածի 5-րդ կետը,

11) արդյո՞ք ԵԱՏՄ-ի մասին Պայմանագրի 25-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով ամրագրված միասնական մաքսային կարգավորման սկզբունքը ենթադրում է մաքսային իրավախախտումների համար պատասխանատվության

հարցերի միասնականացում ԵԱՏՄ անդամ պետությունների օրենսդրություններում եւ իրավակիրառ պրակտիկայում՝ հաշվի առնելով ԵԱՏՄ-ի մասին Պայմանագրի 4-րդ հոդվածով նախատեսված ԵԱՏՄ հիմնական նպատակները:

II. Ընթացակարգը Դատարանում

2. Դատարանի մեծ կոլեգիայի 2025 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ՝ «Աթամեկեն» ՁԱՊ-ի դիմումն ընդունվել է վարույթ:

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) թիվ 2 հավելված հանդիսացող՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի (այսուհետ՝ Ստատուտ) 68-րդ կետի համաձայն՝ պարզաբանման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ):

Կանոնակարգի 75-րդ հոդվածի համաձայն՝ պարզաբանման վերաբերյալ դիմումի հիման վրա գործը քննության նախապատրաստելու շրջանակներում հարցումներ են ուղարկվել Միության անդամ պետությունների բարձրագույն դատական մարմիններ, սահմանադրական հսկողության մարմիններ, լիազորված մարմիններ, Եվրասիական տնտեսական հանձնաժողով, որոնցից ստացվել են պատասխաններ:

III. Դատարանի եզրահանգումները

3. Պայմանագրի 1-ին, 5-րդ հոդվածների համաձայն՝ Միությունը, որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն, օժտվում է իրավասությամբ՝ սույն Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում եւ

ծավալներով:

Պայմանագրի 19-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանի իրավասությունը սահմանվում է իր Ստատուտով, որի 2-րդ կետին համապատասխան՝ Դատարանի գործունեության նպատակն է ապահովել Միության անդամ պետությունների եւ մարմինների կողմից Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի միատեսակ կիրառումը: Դատարանի իրավասությանը, Ստատուտին համապատասխան, վերապահված չեն Միության անդամ պետությունների ազգային օրենսդրության մեկնաբանման հարցերը:

Այսպիսով, Դատարանն իրավասություն ունի պարզաբանելու «միասնական մաքսային կարգավորում», «մաքսային հսկողությունից թաքցնել», «ապրանքների ոչ հավաստի մաքսային հայտարարագրում» եւ «ապրանքների չհայտարարագրում» հասկացությունների բովանդակությունը, ինչպես նաեւ դրանց ուղեկցող հարցերը պատասխանատվության միջոցների կիրառման նյութական եւ դատավարական ասպեկտների վերաբերյալ՝ բացառապես Պայմանագրի, ԵԱՏՄ ՄՕ-ի, Միության շրջանակներում այլ միջազգային պայմանագրերի եւ մաքսային կարգավորման ոլորտում Միության իրավունքի ակտերի իմաստով:

4. Պայմանագրի 3-րդ հոդվածին, 25-րդ հոդվածի 1-ին կետին, 32-րդ հոդվածին համապատասխան՝ Միության գործունեության հիմնական սկզբունքներից մեկը միասնական մաքսային կարգավորման իրականացումն է, որի իրավական հիմքն են Պայմանագիրը, ԵԱՏՄ ՄՕ-ն, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը, որոնց թվին է դասվում նաեւ իր ուժը պահպանող՝ «Մաքսային միության եւ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային օրենսդրության խախտումների համար քրեական եւ վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի պայմանագիրը (այսուհետ՝ 2010 թվականի Պայմանագիր):

Պայմանագրի եւ ԵԱՏՄ ՄՕ-ի դրույթների համակարգային վերլուծությունից

բխում է, որ միասնական մաքսային կարգավորումն ընդգրկում է Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման կարգի եւ պայմանների, Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման հետ կապված մաքսային գործառնությունների կատարման կարգի, Միության մաքսային տարածքում ապրանքների օգտագործման կանոնների, ապրանքների մաքսային հայտարարագրման եւ բացթողման կարգի, մաքսային վճարների վճարման եւ մաքսային հսկողության իրականացման կարգի սահմանումը:

Այսպիսով, Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունները դասվում են Պայմանագրի եւ ԵԱՏՄ ՄՕ-ի կարգավորման առարկային: Միեւնույն ժամանակ Միության իրավունքի այդ ակտերը չեն պարունակում նորմեր, որոնք սահմանում են մաքսային կարգավորման կարգի դեմ ուղղված հանցագործությունների եւ վարչական իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու պայմաններն ու հիմքերը, ներառյալ դրանց տեսակները (կազմերը), մեղքի ձեւը եւ պատժի տեսակները: Նման նորմեր առկա չեն նաեւ 2010 թվականի Պայմանագրում:

5. 2010 թվականի Պայմանագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունների եւ վարչական իրավախախտումների տեսակները (կազմերը), անձանց քրեական եւ (կամ) վարչական պատասխանատվության ենթարկելու կարգն ու սկզբունքները սահմանվում են Միության անդամ պետությունների օրենսդրությամբ՝ 2010 թվականի Պայմանագրի առանձնահատկություններով: 2010 թվականի Պայմանագրի 4-րդ հոդվածին համապատասխան՝ Միության մաքսային տարածքում մաքսային կարգավորման կարգը խախտած անձինք ենթակա են պատասխանատվության՝ Միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում հայտնաբերվել է իրավախախտումը:

Այսպիսով, մաքսային կարգավորման ոլորտում իրավախախտումների տեսակների (կազմերի) սահմանումը, սանկցիաների, դրանց կիրառման

պայմանների եւ կարգի որոշումը չեն կանոնակարգվում ԵԱՏՄ ՄՕ-ով եւ տվյալ փուլում մնում են անդամ պետությունների իրավասության ներքո:

6. Միեւնույն ժամանակ, 2010 թվականի Պայմանագրի 3-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա Միության անդամ պետությունները պարտավորություն են ստանձնել միջոցներ ձեռնարկել Մաքսային միության եւ Միության անդամ պետությունների մաքսային օրենսդրության խախտման համար քրեական եւ վարչական պատասխանատվություն նախատեսող՝ իրենց օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու եւ նման արարքների հակաիրավական բնույթի միասնական սահմանումը նախատեսելու ուղղությամբ, որոնց ծավալի եւ նորմատիվ բովանդակության սահմանման ժամանակ ենթակա է պահպանման ԵԱՏՄ ՄՕ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետը, որով սահմանվում է «Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխում» հասկացությունը:

Ընդ որում, հարկավոր է հաշվի առնել, որ ԵԱՏՄ ՄՕ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետում «մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխում» հասկացությունը սահմանվում է այնպիսի եզրույթների օգնությամբ, որոնց վերաբերյալ մաքսային կարգավորման միջազգային պրակտիկայում ձեւավորվել է դրանց նշանակության միատեսակ ընկալում, ինչը թույլ է տվել օգտագործել վերոհիշյալ եզրույթները միջազգային պայմանագրի (ԵԱՏՄ ՄՕ) տեքստում՝ առանց դրանց բովանդակության բացահայտման: Սա հաշվի առնելով՝ *pacta sunt servanda* սկզբունքի ուժով Միության անդամ պետություններն օժտված են սահմանափակ հայեցողությամբ իրենց ազգային օրենսդրության մեջ «մաքսային հսկողությունից թաքցնել», «ապրանքների ոչ հավաստի մաքսային հայտարարագրում» եւ «ապրանքների չհայտարարագրում» հասկացությունների սահմանումները նախատեսող նորմեր սահմանելու հարցերում:

7. ԵԱՏՄ ՄՕ-ն սահմանում է Միության մաքսային սահմանով ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգը, այսինքն՝

մաքսային ոլորտում իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների կատարման հաջորդականությունը: Այդ գործողությունների կատարման միատեսակ կարգի սահմանման միջոցով հասնում են մաքսային վարչարարության միասնական ստանդարտի ապահովմանը, որի ձեւավորումը նախատեսված է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 12 որոշմամբ հաստատված՝ Մինչեւ 2025 թվականը եվրասիական տնտեսական ինտեգրման զարգացման ռազմավարական ուղղություններով:

ԵԱՏՄ ՄՕ 1-ին հոդվածի 5-րդ կետին համապատասխան՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով չկարգավորված մաքսային իրավահարաբերությունները, մինչեւ այդպիսի միջազգային պայմանագրերով ու ակտերով համապատասխան իրավահարաբերությունների կարգավորումը, կարգավորվում են Միության անդամ պետությունների մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

8. ԵԱՏՄ ՄՕ-ում իրացված են մաքսային իրավունքի նորմերի համալիր բովանդակության սկզբունքները: Մաքսային կարգավորման ոլորտի սահմաններից դուրս եկող իրավահարաբերությունները, որոնք շոշափում են իրավունքի այլ ճյուղեր, Միությունում կանոնակարգված են մի շարք առանձին համաձայնագրերով եւ պայմանագրերով: Ընդ որում, ԵԱՏՄ ՄՕ-ի 2-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ օրենսդրության այլ ճյուղերի հասկացությունները, որոնք գործածվում են ԵԱՏՄ ՄՕ-ում, Միության անդամ պետություններից յուրաքանչյուրում սահմանվում եւ կիրառվում են այն իմաստով, որով դրանք գործածվում են տվյալ պետության օրենսդրության համապատասխան ճյուղերում, եթե այլ բան սահմանված չէ ԵԱՏՄ ՄՕ-ով:

ԵԱՏՄ ՄՕ 354-րդ հոդվածի 4-րդ կետի եւ 2010 թվականի Պայմանագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանցագործությունների եւ վարչական իրավախախտումների տեսակները (կազմերը), ինչպես նաեւ անձանց քրեական եւ (կամ) վարչական պատասխանատվության ենթարկելու կարգն ու սկզբունքները սահմանվում են Միության անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ՝

հաշվի առնելով արարքների հակաիրավականության որոշման միատեսակ մոտեցման կիրառման՝ 2010 թվականի Պայմանագրով նախատեսված առանձնահատկությունները:

Շարադրվածը վկայում է այն մասին, որ վարչական մաքսային իրավախախտումների տեսակների (կազմերի) տարրերը (օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը, սուբյեկտիվ կողմը) նույնպես սահմանվում են բացառապես Միության անդամ պետությունների օրենսդրությամբ: Սա հաշվի առնելով՝ Ստատուտի 46-րդ կետի համատեքստում Դատարանը չի պարզաբանում դիմողի կողմից նշված իրավախախտումների տեսակների (կազմերի) էությունը:

9. ԵԱՏՄ ՄՕ 2-րդ հոդվածի 1-ին կետի 27-րդ ենթակետի համաձայն՝ «մաքսային սահմանով ապրանքների տեղափոխում» է համարվում ցանկացած եղանակով Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման կամ այդ տարածքից դրանց արտահանման հետ կապված գործողությունների ամբողջությունը: ԵԱՏՄ ՄՕ 14-րդ հոդվածի 1-ին եւ 7-րդ կետերով սահմանված է, որ Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքները Միության մաքսային սահմանը հատելու պահից գտնվում են մաքսային հսկողության ներքո: Ընդ որում, մաքսային հսկողության ենթակա ապրանքները կարող են գտնվել նման հսկողության ներքո այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է դրանց կարգավիճակը որոշելու համար: ԵԱՏՄ ՄՕ-ի 310-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողությունն անցկացվում է մաքսային մարմինների կողմից՝ մաքսային հսկողության օբյեկտների առնչությամբ՝ նրանց նկատմամբ կիրառելով ԵԱՏՄ ՄՕ-ով որոշված մաքսային հսկողության ձեւերը եւ (կամ) մաքսային հսկողություն անցկացնելն ապահովող միջոցները:

ԵԱՏՄ ՄՕ-ի 2-րդ, 6-րդ, 14-րդ եւ 310-րդ հոդվածների դրույթների վերլուծությունը դրանց փոխկապակցվածության մեջ թույլ է տալիս եզրակացնել, որ Միության մաքսային տարածք ժամանած ապրանքները ենթակա են մաքսային հսկողության դրանց՝ այդ տարածք ներմուծման պահից՝ անկախ այն հանգամանքից, թե դա օրինական է, թե անօրինական, ինչն էլ պետք է պարզի

մաքսային մարմինը՝ համապատասխան հսկողական միջոցառումների անցկացման միջոցով:

Միության մաքսային սահմանով ապրանքների օրինական տեղափոխման հիմքում ընկած է մաքսային գործառնությունների կատարման եւ մաքսային հսկողության իրականացման ժամանակ սահմանված կարգի, պայմանների եւ կանոնների պահպանումը, որոնց իրացման ընթացքում ապահովվում են արտաքին առեւտրային գործունեության պետական կարգավորման միջոցները: Համապատասխանաբար, Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխում կհամարվի դրանց ցանկացած տեղափոխումը՝ ԵԱՏՄ ՄՕ-ի եւ մաքսային կարգավորման ոլորտում Միության իրավունքի այլ ակտերի պահանջների խախտմամբ:

10. ԵԱՏՄ ՄՕ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետում թվարկված են ԵԱՏՄ ՄՕ-ի եւ մաքսային կարգավորման ոլորտում Միության իրավունքի այլ ակտերի խախտմամբ Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման մի շարք եղանակներ՝ ապրանքների տեղափոխում Միության մաքսային սահմանով այն վայրերից դուրս, որոնցով պետք է կամ կարող է իրականացվել դրանց տեղափոխումը. ապրանքների տեղափոխում՝ մաքսային մարմինների աշխատանքային ժամերից դուրս. ապրանքների տեղափոխում՝ մաքսային հսկողությունից թաքցնելու միջոցով. ապրանքների տեղափոխում՝ ոչ հավաստի մաքսային հայտարարագրման միջոցով. ապրանքների տեղափոխում՝ ապրանքները չհայտարարագրելով. ապրանքների տեղափոխում՝ ապրանքների վերաբերյալ ոչ հավաստի տեղեկություններ պարունակող փաստաթղթեր օգտագործելու միջոցով եւ (կամ) նույնականացման՝ կեղծ կամ այլ ապրանքների վերաբերող միջոցներ օգտագործելու միջոցով:

Նշված եղանակները ԵԱՏՄ ՄՕ-ում ընդգրկվում են «Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխում» միասնական սահմանման մեջ: Մաքսային կարգավորման կարգի դեմ ուղղված իրավախախտումների տեսակների (կազմերի) տարրերը, որոնք ընդգրկվում են ԵԱՏՄ ՄՕ-ում

պարունակվող «Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխում» հասկացության մեջ, որը համընկնում է վարչական իրավախախտումների վերաբերյալ Միության անդամ պետությունների օրենսդրական ակտերի առանձին դիսպոզիցիաների ձեւակերպումների հետ, ԵԱՏՄ ՄՕ-ի կողմից մաքսային իրավահարաբերությունների միասնական կարգավորման առարկա չեն:

Այսպիսով, ԵԱՏՄ ՄՕ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի դրույթները, որոնք պարունակում են, բայց չեն բացահայտում «մաքսային հսկողությունից թաքցնել», «ոչ հավաստի մաքսային հայտարարագրում» եւ «ապրանքների չհայտարարագրում» հասկացությունները, մաքսային գործառնությունների կատարման, մաքսային հսկողության ժամանակ մաքսային կարգավորման նպատակների համար ուղիղ նշանակություն ունեն:

11. Միության իրավունքով նախատեսված է մաքսային կարգավորման կարգի խախտման համար բռնագրավման տեսքով սանկցիայի կիրառման հնարավորություն՝ պահպանելով Միության անդամ պետությունների հայեցողությունը՝ դրա կիրառման հիմքերի եւ պայմանների որոշման մասով:

Վարչական իրավախախտման առարկայի բռնագրավման տեսքով վարչական պատասխանատվության սահմանումը շոշափում է սեփականության իրավունքը: Հաշվի առնելով, որ Պայմանագրի նախաբանով նախատեսված է Միության հիմնադրումը՝ մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների գերակայության սկզբունքի պահպանմամբ, որոնց թվին է դասվում սեփականության իրավունքը, Դատարանի մեծ կոլեգիան սույն Խորհրդատվական եզրակացությունը կայացնելիս հաշվի է առնում Միության անդամ պետությունների սահմանադրական ավանդույթները եւ հաստատում է Դատարանի կողմից մշակված իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, թիվ R-2/18 գործով խորհրդատվական եզրակացության մեջ Դատարանը նշել է պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս սանկցիաների՝ կատարված հակաիրավական գործողության (անգործության) բնույթին համաչափության

սկզբունքի պահպանման անհրաժեշտությունը:

Պատժի համաչափության ապահովման եղանակներից մեկը իրավախախտման համար տարբերակված սանկցիայի սահմանումն է, որը թույլ է տալիս պատժի անհատականացում՝ Միության անդամ պետության իրավակիրառ մարմնին իրավունք տալով կիրառել բռնագրավում կամ ձեռնպահ մնալ դրա կիրառումից՝ հաշվի առնելով գործի հանգամանքների գնահատականը, արարքի հանրային վտանգավորության աստիճանը:

Այսպիսով, Միության անդամ պետությունների կողմից մաքսային կարգավորման կարգի խախտման համար սահմանվող եւ կիրառվող վարչական պատասխանատվության միջոցները պետք է համաչափ լինեն պահպանվող շահերին եւ կատարված հակաիրավական արարքի բնույթին: Համաչափությունը կանխորոշում է հանրային իրավական պատասխանատվության տարբերակումը՝ պայմանավորված իրավախախտման բնույթով եւ դրա կատարման հանգամանքներով, որոնք պայմանավորում են պետական հարկադրանքի այս կամ այն միջոցների անհատականացումը:

12. Մաքսային կարգավորման կարգի խախտման համար պատասխանատվության ենթարկելու իրավական միջոցների ընտրությունը վերապահված է Միության անդամ պետությունների իրավասությանը: Միության եւ Դատարանի լիազորություններին վերապահված չէ Միության անդամ պետությունների կողմից ընտրված իրավական կարգավորման այս կամ այն մեխանիզմի հիմնավորվածության, նպատակահարմարության եւ նախապատվության հարցերի քննարկումը՝ ինչպես դրա բովանդակության, այնպես էլ ազգային իրավական ակտի նորմի կոնկրետ ձեւակերպման ընտրության անհրաժեշտության տեսանկյունից:

Միության անդամ պետությունների հայեցողությունը մաքսային կարգավորման կարգի խախտման համար խստության բարձր աստիճան ունեցող պատասխանատվության միջոցների որոշման հարցում ինքնին չի վկայում այն մասին, որ Միության անդամ պետությունների օրենսդրությունը, որն ընդունվել է

նմանատիպ խախտումների կատարումը կանխելու նպատակով, անհամաչափ է միայն այն պատճառով, որ տուգանքի նշանակումից բացի նախատեսում է նաև իրավախախտման առարկա հանդիսացող ապրանքների բռնագրավումը:

Միության անդամ պետությունների կողմից Միության իրավունքի նորմերի կիրառման գծով իրենց պարտավորությունների բարեխիղճ կատարումը ենթադրում է նրանց կողմից իրավունքի դրույթների խախտման համար պատասխանատվության արդյունավետ միջոցների սահմանում: Միեւնույն ժամանակ, պատասխանատվության վերոհիշյալ միջոցների կիրառումը չպետք է հանգեցնի Միության անդամ պետությունների տարածքների միջև ապրանքների ազատ տեղաշարժի համար խոչընդոտների ստեղծմանը, ինչը նախատեսված է Պայմանագրի 25-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով:

13. Ելնելով Պայմանագրի նախաբանից, ԵԱՏՄ ՄՕ 358-րդ հոդվածից եւ Միության անդամ պետությունների կողմից նախատեսված՝ մաքսային կարգավորման կարգի խախտման համար պատասխանատվության ենթարկվող անձանց իրավունքների պաշտպանության իրավական մեխանիզմներից՝ այդ անձանց պաշտպանության նվազագույն երաշխիքներ կարող են համարվել՝ մաքսային մարմինների որոշումները, գործողությունները (անգործությունը) վիճարկելու (բողոքարկելու) իրավունքը. արդար դատաքննության իրավունքը. սանկցիայի՝ իրավախախտման բնույթին համաչափության իրավունքը. non bis in idem սկզբունքի իրացման իրավունքը (2010 թվականի Պայմանագրի 7-րդ հոդված):

14. Դատարանի մեծ կոլեգիան շարադրվածի հիման վրա ներկայացնում է հետևյալ պարզաբանումները՝

14.1. Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգիրքը նախատեսում է ապրանքների տեղափոխման, մաքսային ընթացակարգերի եւ մաքսային հսկողության ընդհանուր կանոնները, մաքսային հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, սակայն չի սահմանում հասկացությունները եւ չի սահմանում հանցագործությունների եւ վարչական իրավախախտումների տեսակները (կազմերը):

Հանցագործությունների եւ վարչական իրավախախտումների տեսակները (կազմերը), քրեական կամ վարչական պատասխանատվության միջոցների նշանակման կարգն ու սկզբունքները սահմանվում են Միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

14.2. Եվրասիական տնտեսական միությունում մաքսային կարգավորման կարգի խախտման համար պատասխանատվության միջոցները, այդ թվում՝ բռնագրավման կիրառումը, կոնկրետ հանգամանքները հաշվի առնելը, սանկցիայի՝ պահպանվող շահերին եւ հակաիրավական արարքի բնույթին համաչափության հարցի լուծումը, Միության անդամ պետությունների իրավակիրառ մարմինների արտոնությունն է:

14.3. Մաքսային կարգավորման կարգի խախտումների համար պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքների պաշտպանության երաշխիքներն են՝ մաքսային մարմինների որոշումները, գործողությունները (անգործությունը) վիճարկելու (բողոքարկելու) իրավունքը. արդար դատական քննության իրավունքը. սանկցիայի համաչափության սկզբունքի եւ non bis in idem սկզբունքի պահպանումը: Նման իրավունքների իրացման կարգը նախատեսված է Միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

14.4. «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 25-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետում ամրագրված՝ անդամ պետությունների կողմից միասնական մաքսային կարգավորման իրականացման սկզբունքը տվյալ փուլում չի նախատեսում Եվրասիական տնտեսական միությունում մաքսային կարգավորման կարգի խախտման համար քրեական եւ վարչական պատասխանատվության ենթարկելու հարցերի կանոնակարգում:

IV. Եզրափակիչ դրույթներ

Սույն Խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին՝ Ղազախստանի Հանրապետության «Աթամեկեն» ձեռնարկատերերի ազգային պալատ:

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական
ինտերնետային կայքում:

Նախագահող՝

Ա.Ա. Դրոնով

Դատավորներ՝

Է.Վ. Հայրիյան

Դ.Պ. Ալեքսանդրով

Կ.Կ. Ջունուշյան

Ա.Ա. Ջաբարա

Ե.Ժ. Իսմայիլով

Մ.Տ. Կայիպով

Ա.Բ. Կիշկեմբաև

Ն.Վ. Պավլովա

Ա.Գ. Թունյան

